



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, Յուլիս 16-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան կը գտնուէր Ֆրեզնո, ուր Ս. Պատարագ մատուցանեց Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագէն ետք, Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Ս. Վահան Քիւյ. Կոստանեանի ու հոգաբարձութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած էր ընդունելութիւն մը, որուն ընթացքին, հոգաբարձութիւնը կրթաթոշակներ տրամադրեց խումբ մը աշակերտներու եւ ուսանողներու, որոնք երկրորդական ու բարձրագոյն ուսման կը հետեւին ու ձեռք բերած են փայլուն արդիւնքներ:

Եկեղեցին ունի կրթական յատուկ հիմնադրամ մը, եւ ամէն տարի կրթաթոշակներ յատկացնելով՝ կը քաջալերէ յաջողութիւն արձանագրող աշակերտները:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6ին, նմանապէս հովիւին ու հոգաբարձութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած էր ընտանեկան աւանդական ընթրիքի երեկոյ մը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր:

Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցող այս երեկոյթին, հովիւն ու հոգաբարձութիւնը պատուեցին Եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի անցեալի ու այժմու նուիրեալ ծառայողները:

Յայտնենք, որ այս առիթով, երիտասարդականի ու պատանեկանի անդամները մասնակցեցան արտա-դասարանային աշխատանքներու եւ մարզական խաղերու. Առաջնորդ Սրբազանը, քաջալերելով երիտասարդութեան գործունեութիւնը, իր մասնակցութիւնը բերաւ մարզական խաղերուն:

PRELATE CONDUCTED HOLY MASS AND PARTICIPATED IN RECEPTIONS AT THE FRESNO PARISH

On Sunday, July 16, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Fresno parish where he conducted Holy Mass at Holy Trinity Church.

Following Mass, a reception was organized by the Pastor and Board of Trustees, during which the Board of Trustees granted scholarships to a group of honor roll students who are pursuing higher education. The Church has a special fund for this purpose and in this way encourages students each year.

At 6:00 p.m., the Pastor and Board of Trustees had organized a family night, under the auspices of the Prelate. The event took place at the church hall. The Pastor

and Board of Trustees honored past and present directors and teachers of the Sunday School.

On this occasion, youth group members participated in sports and other activities while the Prelate offered his encouragement for their efforts.

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ Գ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԵՐ ԹԵՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հինգշաբթի, Յուլիս 20-ին, Ազգային Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մեջ Առաջնորդ Սրբազան Հայրը ընդունեց այցելութիւնը Հայաստանի հիւպատոսարանի անձնակազմի անդամներէն՝ գլխաւոր հիւպատոսի տեղակալ Տիար Յարութիւն Գոճոյեանի ու Համայնքի հետ կապի պատասխանատու Տիկին Արմինէ Պալեանի, որոնք եկած էին տեղեկութիւններ փոխանցելու Հայաստան-Սփիւռք Գ. խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքներուն մասին:

Խորհրդակցութիւնները ընդգրկեցին խորհրդաժողովին արժարժեղի հարցերն ու մեր Թեմի մասնակցութեան կարելիութիւնները:

Հրաժեշտի պահուն, հայրենի դիւանագիտութեան ներկայացուցիչները հրաւեր ուղղեցին Առաջնորդ Սրբազան Հօր, որպէսզի այցելութիւն մը տայ հիւպատոսարան:

Նշենք, որ նոյն հարցերուն մասին լայնածիր խորհրդակցութեան նպատակով, Ուրբաթ, Յուլիս 21-ին, կ.ե. ժամը 4-ին, Հայաստանի Հիւպատոսարանին մեջ կազմակերպուած էր ներկայացուցչական ժողով մը:

Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զեյն. Գամպուրեան Առաջնորդ Սրբազանը ներկայացուց այս ժողովին: Ներկայ էր նաեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ՝ տիար Խաժակ Տիքիճեան: Հրաւիրուած էին հայկական յարանուանութիւններու, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

PRELATE MEETS WITH REPRESENTATIVES OF THE CONSULATE GENERAL OF ARMENIA

On Thursday July 20, the Prelate welcomed Deputy Consul General of the Republic of Armenia Mr. Harout Kojoyan, and community affairs director Mrs. Armine Balian, to discuss preparations for the third Armenia-Diaspora Forum. Also discussed was the prospect of the Prelacy participating in the Forum.

Following the meeting, the representatives of the Consulate General invited the Prelate to visit the Consulate.

A more expansive discussion on this topic took place at 4:00 p.m. on Friday July 21, at the Consulate General. Rev. Ashod Kambourian of Holy Cross Cathedral represented the Prelate. Mr. Khajag Dikijian, Central Executive Council member, also attended.

Members and representatives of all Armenian organizations were invited.

ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԻՕՐԵԱՅ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎ ՄԸ ԿԸ ԳՈՒՄԱՐԷ

Շաբաթ, Յուլիս 22-ին, Ազգային Վարչութիւնը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, ընդհանուր աշխատանքներու քննարկման նպատակով, միօրեայ ժողով մը պիտի գումարէ, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ յարկին տակ, քննարկելու համար Ազգային Առաջնորդարանի յառաջիկայ աշխատանքներու դաշտերն ու մշակելու համապատասխան ծրագիրներ:

A DAY LONG SPECIAL MEETING OF THE EXECUTIVE COUNCIL

On Saturday, July 22, the Prelate will preside over a day-long meeting of the Prelacy Executive Council at St. Mary's Church in Glendale. The purpose of the meeting is to evaluate the endeavors of the Prelacy and to discuss future plans.

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Շաբաթ, Յուլիս 22-ի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Երիտասարդաց խմբակի կազմակերպած դասախօսական ձեռնարկը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ «Արմէնակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ:

Տեղի պիտի ունենայ «Տա Վինչի Զոտ» գիրքին եւ ժապաւենին առնչուող վաւերագրական փաստարկումներու տեսաժապաւենի ցուցադրութիւն եւ քննարկում:

Եկեղեցւոյ Երիտասարդաց խմբակի վարիչներէն՝ տիար Րաֆֆի Նալճեան պիտի ներկայացնէ նիւթը: Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Սիւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ երիտասարդներուն կողմէ տրուած հարցադրութիւններուն, պիտի տայ սպառնիչ լուսաբանութիւններ:

YOUTH GROUP OF ST. MARY'S CHURCH ORGANIZES A DISCUSSION ON "THE DAVINCI CODE"

On Saturday, July 22, the youth group of St. Mary's Church in Glendale has organized a lecture to take place at the Armenak Der Bedrossian Hall of the church. During the lecture, a documentary will be shown regarding the book and movie "The Da Vinci Code".

Mr. Raffi Naljian, youth leader of St. Mary's Church, will present the topic. Very Rev. Fr. Muron Aznikian, the co-director of the Christian Education Department of the Prelacy will attend and lead the event.

**ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Մեր Տիրոջ Եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան տօնին առիթով, Կիրակի Յուլիս 23-ին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր Ս. Պատարագ:

Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան Հայրը Ս. Եւ Ամմահ պատարագ պիտի մատուցանէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր բարեպաշտ հաւատացեալները ներկայ գտնուելու սրբազան արարողութեանց եւ Տաղաւար տօնին առիթով աղօթք բարձրացնելու, հաղորդուելու օրուան խորհուրդով եւ ունկնդրելու Առաջնորդ Սրբազան հօր հոգեշունչ քարոզը:

Քորոնայի մեր ծխական համայնքը եւս այսօր պիտի տօնէ Այլակերպութեան տօնը: Առաջնորդ Սրբազան հօր տնօրինումով, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Գորոնայի մէջ:

**ON THE FEAST OF TRANSFIGURATION THE PRELATE WILL
CELEBRATE HOLY MASS AT ST. GARABED CHURCH**

On Sunday, July 23, all Prelacy churches will celebrate the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ with a special Holy Mass.

On this special feast day, the Prelate will conduct Holy Mass and deliver the sermon at St. Garabed Church in Hollywood.

We invite our faithful to participate in the Mass and to receive the inspiring message of the Prelate.

The Feast of Transfiguration will also be celebrated at the Armenian Apostolic Church of Corona, Riverside County, where under the direction of the Prelate, Very Rev. Fr. Muron Aznikian will conduct Holy Mass.